ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավանի համայնքապետարան, գ.Շենավան
հեռ. 077-57-07-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 19-Ա

26 օգոստոսի 2019 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 06-086-0001-0006 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 2 – րդ կետի 1 – ին մասով, 4 – րդ կետի 1 – ին մասով «Տեղական Ինքանակառավարման մասին» օրենքի 38 – րդ հոդվածով, ՀՀ Կառավարության «Ինքնակամ կառույցների օրինականացման եվ տնօրինման կարգը հաստատելու մասին» 2006 թվականի մայիսի 18 – ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով ՀՀ գործող հողային օրենսգրքի 64 – րդ հոդվածի 2 – րդ կետով և հիմք ընդունելով հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.03.1992թ – ի թիվ 13 որոշումը, հողամասի սահմանների վերաբերյալ Արսեն Ռուդիկի Իսահակյան ԱՁ – ի կողմից կազմված հատակագիծը, 359552 սեփականության վկայականը և հարգելով համայնքի բնակիչ Վեներա Կարապետյանի դիմում-խնդրանքը այն մասին, որ Շենավան համայնքում 06-086-0001-0006 ծածկագրի տակ գտնվող 0.1372 հա տնամերձ հողամասի վրա 2005թ – ին ինքնակամ կառուցել է 88.71 քմ ընդհանուր մակերեսով թիվ 1 և 3.77 քմ ընդհանուր մակերեսով թիվ 2 բնակելի տներ, 7.80քմ բաց պատշգամբ, 59.85 մակերեսով մառան, 27.05քմ մակերեսով մառան , 0.93 քմ պարիսպ, 0.16քմ մակերեսով պարիսպ:

Նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և քանի, որ կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60 – րդ հոդվածի ցանկում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրենքի ուժով օրինականացնել և ճանաչել Վեներա Վարդանի Կարապետյանի /ծնված1941թ./ սեփականության իրավունքը Շենավան համայնքում 06-086-0001-0006 ծածկագրի տակ սեփականության իրավունքով իրենց պատկանող 0.1372 հա տնամերձ հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 88.71 քմ ընդհանուր մակերեսով թիվ 1 և 3.77 քմ ընդհանուր մակերեսով թիվ 2 բնակելի տներ, 7.80քմ բաց պատշգամբ, 59.85 մակերեսով մառան, 27.05քմ մակերեսով մառան , 0.93 քմ պարիսպ, 0.16քմ մակերեսով պարիսպ:

2. Հանձնարարել հաշվապահին իրականացնելու ինքնակամ շինությունների համար օրենքով սահմանված վճարի գանձման աշխատանքները գանձելով 74600 (յոթանասունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ

3. Որոշումն ընդունելու օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 – օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել համապատասխան ստորաբաժանմանը, որպես հիմք վերը նշված անշարժ գույքերին պետական գրանցում տալու համար:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայցման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Սիսիթարյան